«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-316-27.06.2022-ՏՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ նախագիծ) առաջարկվում է սահմանել, որ եկամտային հարկով հարկման բազան որոշելու նպատակով նվազեցվող եկամուտներ են համարվում նաև անհատական բնակելի տան կառուցապատող համարվող ֆիզիկական անձի կողմից անհատական բնակելի տան, շինությունների կամ այլ տարածքների (առանց ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող ոչ բնակելի տարածքների)՝ անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձին օտարումից ստացվող եկամուտները, եթե անհատական բնակելի տունը, շինությունները կամ այլ տարածքներն օտարվել են դրանց ավարտական ակտի ամսաթիվը ներառող հարկային տարվան հաջորդող երկու հարկային տարիների ընթացքում:

Նախագծի ընդունման հիմնավորման համաձայն՝ նախագծի նպատակն է անհատական բնակելի տան կառուցապատող համարվող, անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց ազատել չհիմնավորված լրացուցիչ ծախսերից:

Վերոգրյալի կապակցությամբ, հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը նախագծի վերաբերյալ սկզբունքային դիտողություններ և առաջարկություններ չունի:

Միաժամանակ առաջարկում ենք՝

1) համապատասխան լրացում կատարել նաև Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 147-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետում և «կառուցապատող» բառից առաջ լրացնել «բազմաբնակարան (այդ թվում՝ բազմաֆունկցիոնալ) շենքի, ստորաբաժանված շենքի» բառերը, իսկ այդ դրույթը կիրառել 2018 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների նկատմամբ:

Առաջարկությունը հիմնավորվում է այն հանգամանքով, որ ինչպես նախագծով առաջարկվող, այնպես էլ 2021 թվականի նոյեմբերի 17-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-360-Ն օրենքով կատարված փոփոխություններին համապատասխան՝ անհատական բնակելի տան կառուցապատող համարվող ֆիզիկական անձինք ազատվում են անհատական բնակելի տան, շինությունների (այդ թվում՝ անավարտ, կիսակառույց) կամ այլ տարածքների՝ անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձին օտարումից ստացվող եկամտի մասով եկամտային հարկ հաշվարկելու և վճարելու պարտավորությունից, մինչդեռ անհատական բնակելի տան կառուցապատող համարվող ֆիզիկական անձանցից նվիրատվությամբ գույք ստացող ֆիզիկական անձանց համար առաջանում է եկամտային հարկի գծով հարկային պարտավորություն.

2) հաշվի առնելով, որ նախագծով փոփոխություն է կատարվում օրենսգրքի երկու հոդվածներում՝ նախագծի վերնագրում «փոփոխություն» բառը փոխարինել «փոփոխություններ» բառով.

3) նախագծի 1-ին հոդվածում նշված օրենսգրքի լրիվ անվանումը համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներին, որոնց համաձայն՝ սահմանադրական օրենք չհանդիսացող օրենսգրքի լրիվ անվանումը հիշատակելիս հետևյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, օրենսգրքի վերնագիրը և «օրենսգիրք» բառը, եթե վերնագիրը չի ներառում այն: Սահմանադրական օրենք չհանդիսացող օրենսգրքի կրճատ անվանումը հիշատակելիս նշվում է օրենսգրքի վերնագիրը և «օրենսգիրք» բառը, եթե վերնագիրը չի ներառում այն: